# ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N

ք. Գյումրի << >> << >> 2014 թ.

<<Գյումրու <<Երեխաների տուն>> ՊՈԱԿ-ը, ի դեմս տնօրեն Ռ. Ավագյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մի կողմից, (այսուհետև՝ Գնորդ) և « » ____-ն, ի դեմս Ընկերության տնօրեն ---------------, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Վաճառող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին հանձնել սույն պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված ______ /այսուհետ՝ Ապրանք/, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

**2. ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ**

2.1 Վաճառողն Ապրանքը հասցնում է Գնորդին:

2.2 Ապրանքը մատակարարվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված գնման ժամանակացույցին համապատասխան և ժամկետը սահմանվում է առնվազն 30 աշխատանքային օր,որի հաշվարկը կատարվում է սույն պայմանագիրը կնքելու օրվանից, բացառությամբ այն դեպքերի, երբ Վաճառողը համաձայնում է պայմանագիրը կատարել ավելի կարճ ժամկետում:

**3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**3.1 Գնորդն իրավունք ունի՝**

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից.

3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ սույն պայմանագրի 1 կետում նշված տեխնիկական բնութագրերին չհամապատասխանող Ապրանք.

ա) Չընդունել Ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանել անպատշաճ որակի Ապրանքը սույն պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու սույն պայմանագրի 7.3 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 7,2 կետով նախատեսված տույժը:

բ) հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը.

3.1.3 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը վաճառողի կողմից պարտավորությունները խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ սույն պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ սույն պայմանագրով սահմանված սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը .

3.1.4 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), Եթե Վաճառողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը.

3.1.4.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում,եթե՝

ա) Մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք,որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) խախտվել է Ապրանքի մատակարարման ժամկետը.

3.1.5 Զննել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

**3.2 Գնորդը պարտավոր է՝**

3.2.1 Կատարել Պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքների ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից սույն պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2.3Սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում իրականացնել վճարումները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին սույն պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ սույն պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

**3.3 Վաճառողն իրավունք ունի՝**

3.3.1 Գնորդից պահանջել ընդունելու սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը.

3.3.2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

3.3.3 Գնորդից պահանջել վճարելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները.

3.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը:Վաղաժամկետ մատակարարված և Գնորդի կողմից ընդունված Ապրանքը հաշվարկվում է հաջորդ փուլումմատակարարման ենթակա Ապրանքի քանակի հաշվին:

3.3.5 Սույն պայմանագրի մինչև 25 տոկոսը կարող է իրականացվել գործակալության պայմանագիր կնքելու միջոցով: Գործակալության

**3.4 Վաճառողը պարտավոր է՝**

3.4.1 Գնորդին հանձնել Ապրանքը՝ սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

3.4.3 Գնորդի պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.4 Հետ տանել Գնորդի կողմից սույն պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.5 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.6 Գնորդին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

3.4.7 Սույն Պայմանագրի 3.1.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները:

3.4.8 Սույն պայմանագրի կատարման (կանխավճարի) ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

**4. ԱՊՐԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ**

4.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է ՝ -------------(----------------) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Յուրաքանչյուր ապրանքատեսակի միավորի գինը սահմանված է սույն պայմանագրի N 2 հավելվածում:Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:Կանխավճարի մարումն իրականացվում է սույն պայմանագրով նախատեսված արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով:Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է պայմանագրի ընդհանուր գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ:

4.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա N 2 հավելվածով՝ վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում, /եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումը կատարվում է 20 բանկային օրվա ընթացքում/ բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ապրանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն սույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները բավարարում են:

**5. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ**

5.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համար:

5.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների գնման դեպքում երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 365 օրացուցային օրը:

5.2.1 Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին,Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

**6. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ**

6.1 Պայմանագրի կամ դրա մասի կատարման արդյունքներն ընդունվում են Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետև՝ արձանագրություն) ստորագրմամբ: Վաճառողը՝ Ապրանքի

հանձնման ավարտից 2 աշխատանքային օրվա ընթացքում Գնորդին է ներկայացնում հանձնած Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (Հավելված N 3):

6.2 Արձանագրությունը ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրություն չի ստորագրվում և պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները:

բ) վաճառողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

6.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

**7. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ**

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված՝ մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 Վաճառողի կողմից սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում գանձվում է տույժ 0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

7.3 Սույն պայմանագրի 1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

7.4 Սույն պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարներից:

7.5 Գնորդի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

7.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

**8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)**

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

**9. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ**

9.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից:

**9.1.2 Սույն պայմանագիրը կնքվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասի հիմքով՝ պայմանով, որ դրա շրջանակներում գնում կարող է կատարվել անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում: Սույն մասի համաձայն կնքված պայմանագիրը լուծարվում է, եթե այն կնքվելու օրվան հաջորդող տարվա ընթացքում պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցները չեն նախատեսվել:**

9.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների գնման դեպքում երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 365 օրացուցային օրը:

9.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Վաճառողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու

համար: Ընդ որում, Գնորդը չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Վաճառողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման Պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

9.4 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր պայմանագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

2) սույն պայմանագրով նախատեսված շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գները կորոշվեն և դրանց փոփոխությունը կգնահատվի նախապես համաձայնեցվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ, որի վերաբերյալ կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:

Արգելվում է սույն պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող գնման առարկաների միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը.

9,5 Սույն Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող և (կամ) Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

9,6 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

9,7 Սույն պայմանագիրը և հավելվածները կազմված են էջից, կնքվում են երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, 2 և 3 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

9,8 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

9,9 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| <<Գյումրու<<Երեխաների տուն>> ՊՈԱԿ<br>ք. Գյումրի, Թամանյան 17<br><<Ինեկոբանկ>> ՓԲԸ Գյումրու մասնաճյուղ<br>հ/հ 2050143000781001<br>հվհհ 05521918<br>Տնօրեն _______________ Ռ. Ավագյան<br>(ստորագրություն)<br>Կ.Տ. | |

Հավելված 3
<< >> << >> 2014թ. կնքված
,N ________________ *ծածկագրով գնման պայմանագրի*

Վաճառող
____________________________
____________________________
գտնվելու վայրը ____________
հh ________________________
____________________________
hվhh ______________________

Գնորդ
____________________________
____________________________
գտնվելու վայրը ____________
հh________________________
____________________________
hվhh______________________

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N**
**ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

<<____>> <<_________________>> 20 թ.

Պայմանագրի անվանումը՝ ________________________________________________________
________________________________________________________________________________
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ <<____>> <<_________________>> 20 թ.
Պայմանագրի համարը՝ __________
Պատվիրատուն՝ ի դեմս ________________________________________________________ և
Կատարողը՝ ի դեմս____________________________________________________________,
հիմք ընդունելով, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները (այսուհետև՝ մատակարարումները) համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Կատարողը __ _________ 20___թ-ից __ _________ 20__ թ. ընկած ժամանակահատվածում մատակարարել է հետևյալ ապրանքները

| Գնման առարկայի անվանումը | Գնման առարկայի քանակական ցուցանիշը | մատակարարումների ժամկետները | Վճարման ենթակա գումարը (հազար դրամ) | Վճարման ժամկետը (ըստ ժամա-նակացույցի) |
|---|---|---|---|---|
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| Ընդամենը | | | | |

Վերոհիշյալ մատակարարումների իրականացման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Մատակարարումը հանձնեց
______________________________
ստորագրություն
______________________________
Ազգանուն, Անուն
Կ.Տ.

Մատակարարումը ընդունեց
______________________________
ստորագրություն
______________________________
Ազգանուն, Անուն
Կ.Տ.